



Covenant of Mayors

Committed to local sustainable energy

www.eumayors.eu

ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ



ՔԱՆԻ ՈՐ կլիմայական փոփոխությունների հարցերով մասնագետների միջկառավարական խումբը հաստատել է, որ կլիմայական փոփոխությունն իրականություն է, և որ հանրային գործունեության համար անհրաժեշտ է ներգիայի օգտագործումը մեծապես պատասխանատու է դրա համար,

ՔԱՆԻ ՈՐ 2007թ. մարտի 9-ին ԵՄ-ն ընդունեց «Էներգիա՝ աշխարհը փոխելու համար» փաստաթղթերի փաթեթը՝ միակողմանիորեն պարտավորություն ստանձնելով մինչև 2020թ. 20%-ով նվազեցնել ածխաթթու գազի (CO₂) արտանետումները՝ որպես էներգիայի արդյունավետության 20% աճի և էներգիայի խառնուրդում վերականգնվող էներգիայի աղբյուրների 20% չափաբաժնի հետևանք,

ՔԱՆԻ ՈՐ «Եվրամիության էներգիայի արդյունավետության գործողությունների ծրագիրը» գիտակցելով ներուժը, որպես առաջնահերթություն, ներառում է «Քաղաքապետերի դաշնագրի» ստեղծումը,

ՔԱՆԻ ՈՐ ԵՄ տարածաշրջանների հանձնախումբը շեշտում է տեղական և տարածաշրջանային ուժերի միավորման անհրաժեշտությունը, քանի որ բազմաստիճան կառավարումն արդյունավետ գործիք է՝ կլիմայական փոփոխությունների դեմ ուղղված գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու համար և հետևաբար նպաստում է «Քաղաքապետերի դաշնագրում» տարածաշրջանների ներգրավմանը,

ՔԱՆԻ ՈՐ մենք պատրաստակամ ենք հետևելու Leipzig-ի կայուն եվրոպական քաղաքների կանոնադրության առաջարկություններին, որոնք վերաբերում են էներգիայի արդյունավետության բարելավման անհրաժեշտությանը,

ՔԱՆԻ ՈՐ մենք տեղյակ ենք Aalborg-ի պարտավորությունների գոյությանը, որն ընկած է քաղաքային կայունության համար ներդրվող բազմաթիվ շարունակական ջանքերի և Տեղական ծրագիր 21 (Local Agenda 21) գործընթացների հիմքում,

ՔԱՆԻ ՈՐ մենք ընդունում ենք, որ տեղական ինքնակառավարման մարմինները և տարածաշրջանային կառավարությունները պետական կառավարությունների հետ կիսում են գլոբալ տաքացման դեմ պայքարելու պատասխանատվությունը և պետք է գործեն ըստ այդմ՝ անկախ այլ կողմերի պարտավորություններից,

ՔԱՆԻ ՈՐ մեծ և փոքր քաղաքներն ուղղակիորեն և անուղղակիորեն (քաղաքացիների կողմից օգտագործվող ապրանքների և ծառայությունների միջոցով) ջերմոցներից առաջացած գազի արտանետումների ավելի քան կեսի պատճառ են հանդիսանում, որոնք առաջանում են մարդկանց գործունեության հետ կապված էներգիայի օգտագործումից,

ՔԱՆԻ ՈՐ ԵՄ-ի՝ արտանետումները կրճատելու խոստումը հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե տեղական շահագրգիռ կողմերը, քաղաքացիները և նրանց խմբավորումները կիսեն այդ գաղափարը,

ՔԱՆԻ ՈՐ տեղական ինքնակառավարման մարմինները և տարածաշրջանային կառավարությունները, որոնք ամենասերտ վարչական հարաբերություններն ունեն քաղաքացիների հետ, պետք է գործողություն ղեկավարեն և օրինակ ցույց տան,

ՔԱՆԻ ՈՐ էներգիայի պահանջի և վերականգնվող էներգիայի աղբյուրների գործողություններից շատերը, որոնք անհրաժեշտ են կլիմայական քայքայումն արգելակելու համար, մտնում են տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության շրջանակներում կամ էլ հասանելի չեն լինում առանց նրանց քաղաքական աջակցության,

ՔԱՆԻ ՈՐ ԵՄ անդամ պետությունները կարող են օգտվել տեղական մակարդակով իրականացվող արդյունավետ ապակենտրոնացված գործողությունից՝ ջերմոցների գազի արտանետման նվազեցման հետ կապված իրենց պահանջները բավարարելու համար,

ՔԱՆԻ ՈՐ տեղական ինքնակառավարման մարմինները և տարածաշրջանային կառավարությունները ողջ եվրոպայով մեկ էներգիայի արդյունավետության ծրագրերի միջոցով նվազեցնում են գլոբալ տաքացման աղտոտիչ նյութերը՝ ներառյալ կայուն քաղաքային շարժունությունը, ինչպես նաև վերականգնվող էներգիայի աղբյուրների զարգացումը,



ՄԵՆՔ՝ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐՍ, ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ ԵՆՔ

ԲԵՄ-ի կողմից 2020թ. համար սահմանած **նպատակների սահմաններից դուրս գալ**՝ նվազեցնելով ածխաթթու գազի (CO₂) արտանետումները մեր համապատասխան տարածքներում՝ նվազագույնը 20%-ով՝ մեր հանձնագրին համապատասխան գործունեության տարածքներում «Կայուն էներգիայի գործողության ծրագրի» իրականացմամբ: Հանձնառությունը և գործողության ծրագիրը կվավերացվեն մեր համապատասխան ընթացակարգերով.

պատրաստել նախնական արտանետումների ցուցակագրում՝ որպես «Կայուն էներգիայի գործողության ծրագրի» հիմք,

ներկայացնել «Կայուն էներգիայի գործողության ծրագիրը», մեզնից յուրաքանչյուրի կողմից «Քաղաքապետերի դաշնագրի» պաշտոնական ստորագրմանը հաջորդող մեկ տարվա ընթացքում,

հարմարեցնել քաղաքի կառույցները, ներառյալ բավարար մարդկային ռեսուրսների բաշխումը՝ անհրաժեշտ գործողություններ կատարելու համար,

մեր աշխարհագրական տարածքներում կենտրոնացնել քաղաքացիական հասարակությանը՝ մասնակցելու գործողությունների ծրագրի ստեղծմանը՝ ընդգծելով այն քաղաքականությունները և միջոցները, որոնք անհրաժեշտ են ծրագիրն իրականացնելու և դրա նպատակներին հասնելու համար: Յուրաքանչյուր տարածքում կստեղծվի գործողությունների ծրագիր և այն կներկայացվի Դաշնագրի քարտուղարությանը՝ ստորագրելուց հետո մեկ տարվա ընթացքում,

ներկայացնել գործողությունների իրականացման հաշվետվություն՝ նվազագույնը երկու տարին մեկ՝ գործողությունների ծրագիրը գնահատման, վերահսկման և վավերացման ներկայացնելուց հետո,

այլ տարածաշրջանային ստորաբաժանումների հետ **կիսել մեր փորձը** և հմտությունները,

Եվրախորհրդի և այլ շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ **կազմակերպել էներգիայի օրեր կամ քաղաքի պարտավորության օրեր**՝ թույլ տալով քաղաքացիներին ուղղակիորեն օգտվել էներգիայի ավելի խելամիտ օգտագործմամբ ընձեռնված հնարավորություններից և առավելություններից, ինչպես նաև տեղական լրատվամիջոցներին կանոնավոր կերպով տեղեկացնել գործողությունների ծրագրին առնչվող զարգացումների վերաբերյալ,

մասնակցել և ներդրում ունենալ ԵՄ-ի քաղաքապետերի տարեկան համաժողովին՝ «Կայուն էներգիա Եվրոպային» ծրագրի համար,

դաշնագրի ուղերձը տարածել համապատասխան միջավայրում և մասնավորապես խրախուսել այլ քաղաքապետերին միանալ դաշնագրին,

ընդունել Դաշնագրին մեր անդամակցության ավարտվելը, որը պետք է գրավոր կերպով ծանուցվի քարտուղարությանը, հետևյալներից որևէ մեկի դեպքում.

- i) չի ներկայացվում «Կայուն էներգիայի գործողության» ծրագիրը՝ «Քաղաքապետերի դաշնագրի» պաշտոնական ստորագրմանը հաջորդող մեկ տարվա ընթացքում,
- ii) անհամապատասխանություն ածխաթթու գազի (CO₂) նվազեցման ընդհանուր նպատակի հետ, ինչպես նվազ է գործողությունների ծրագրում կապված գործողությունների ծրագրի չկատարման կամ թերի կատարման հետ,
- iii) երկու հաջորդական ժամանակաշրջանների համար հաշվետվությունը չներկայացնելը:

ՄԵՆՔ՝ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐՍ ՆԱՄԱԶԱՅՆՈՒՄ ԵՆՔ



Եվրահանձնաժողովի որոշման հետ՝ իրականացնել և ֆինանսավորել տեխնիկական և խթանող աջակցության **կառուցվածք**, ներառյալ՝ գնահատման և վերահսկման գործիքների կիրառումը, մեխանիզմներ՝ աջակցելու տարածքների միջև հմտությունների փոխանակմանը, ինչպես նաև գործիքներ՝ աջակցելու հաջողված չափանիշների կրկնօրինակմանը և բազմապատկմանը՝ իրենց բյուջեների սահմաններում,

Եվրահանձնաժողովի դերին՝ ընդունելու ԵՄ քաղաքապետերի համաժողովի **համակարգումը**՝ «Կայուն էներգիա Եվրոպայում» թեմայով,

Եվրահանձնաժողովը հայտարարված մտադրությանը՝ աջակցել մասնակից տարածքային ստորաբաժանումների միջև **փորձի փոխանակմանը**՝ ուղեցույցների տրամադրմամբ և որոշված նախնական օրինակներով՝ հնարավոր իրականացման համար, ինչպես նաև գոյություն ունեցող գործողություններին և ցանցերին կապվելով, որոնք աջակցում են կլիմայական պաշտպանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների ունեցած դերին: Այս նախնական օրինակները պետք է դառնան այս Դաշնագրի անքակտելի մասը և պետք է սահմանվեն դրա հավելվածներում,

Եվրահանձնաժողովի աջակցությանը, որը տրամադրվում է այն մեծ և փոքր քաղաքների, **ճանաչման և հանրային տեսանելիության համար**, որոնք Դաշնագրի մաս են կազմում՝ տրամադրված «Կայուն էներգիա Եվրոպայում» լոգոյի օգտագործման և Հանձնաժողովի հաղորդակցման հարմարությունների աջակցման միջոցով,

տարածաշրջանների խորհուրդը ծանրակշիռ կերպով աջակցում է Դաշնագրին և դրա նպատակներին՝ ԵՄ-ում տեղական և տարածաշրջանային մարմինների ներկայացուցչությամբ,

օժանդակությունը, որը Դաշնագրին աջակցող այդ անդամ երկրների, տարածաշրջանների, մարզերի, խորհրդատու քաղաքների և այլ **ինստիտուցիոնալ կառույցների** կողմից տրամադրվում է ավելի փոքր համայնքներին, օգնում է, որ վերջիններս կարողանան ենթարկվել Դաշնագրի կանոններին,



ՄԵՆՔ՝ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐՍ, ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ



Եվրահանձնաժողովին և պետական մարմիններին կազմել համագործակցության նախագծեր և համաձայնեցված աջակցման կառուցվածքներ, որոնք կօգնեն ստորագրող կողմերին իրականացնել «Կայուն էներգիայի գործողությունների» ծրագիրը,

Եվրահանձնաժողովին և պետական մարմիններին իրենց համապատասխան աջակցման ծրագրերում Դաշնագրի գործողությունները որպես գերակայություններ ի նկատի ունենալ, ինչպես նաև քաղաքներին տեղեկացնել ու դրանք ներառել տեղական մակարդակի քաղաքականությունների և նախագծերի ֆինանսավորման գործում՝ դրա նպատակների սահմաններում,

Եվրահանձնաժողովին բանակցել ֆինանսական դերակատարների հետ՝ ֆինանսական միջոցներ հայթայթելու, որոնք ուղղված են աջակցելու գործողությունների ծրագրում եղած աշխատանքների իրականացմանը,

պետական մարմիններին «էներգիայի արդյունավետության գործողությունների պետական ծրագրի» և «վերականգնվող էներգիայի աղբյուրների գործողությունների պետական ծրագրի» նախապատրաստմանը և իրականացմանը ներգրավել տեղական ինքնակառավարման մարմիններին և տարածաշրջանային կառավարություններին,

Եվրահանձնաժողովին և պետական մարմիններին աջակցել մեր՝ «Կայուն էներգիայի գործողությունների» ծրագրի իրականացմանը՝ համապատասխան սկզբունքներին, կանոններին և արդեն համաձայնեցված եղանակավորությանը, ինչպես նաև այն ամենի, ինչի համար կարող է համաձայնություն ձեռք բերվել Կողմերի առաջարկությամբ՝ ապագայում, գլոբալ մակարդակով, մասնավորապես ՄԱԿ-ի շրջանակներում կլիմայական փոփոխությունների վերաբերյալ կազմակերպվող համաժողովում (UNFCCC): Մեր ակտիվ մասնակցությունն ածխաթու գազի (CO₂) արտանետումների կրճատման հարցում կարող է հանգեցնել նաև ավելի հավակնոտ գլոբալ թիրախի:

ՄԵՆՔ՝ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐՍ, ՔԱԶԱԼԵՐՈՒՄ ԵՆՔ ԱՅԼ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԻՆՉՊԵՆ ՆԱԵՎ ԱՅԼ ԱՎԵԼԻ ԱՁԳԵՑԻՎ ՇԱՀԱԳՐԳԻՉ ԿՈՂՄԵՐԻՆ, ՄԻԱՆԱԼ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳՐԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆԸ՝ ԴԱՇՆԱԳՐԻՆ ԻՐԵՆՑ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԼՊԱՏԱԿՈՎ:



N.B.: Չավելվածը տե՛ս էջի հակառակ կողմում

ՀԱՎԵԼՎԱԾ

1. Տեղական ինքնակառավարման մարմինների դերն աշխատանքների իրականացման մեջ

Էներգիայի արդյունավետության միջոցներ, վերականգնվող էներգիային վերաբերող ծրագրեր և էներգիայի հետ կապված այլ գործողություններ կարող են ներկայացվել տեղական ինքնակառավարման մարմինների և տարածաշրջանային կառավարությունների գործունեության տարբեր ոլորտներում:

- սպառող և ծառայություն մատուցող

Տեղական ինքնակառավարման մարմիններն զբաղեցնում են շատ շենքեր, որոնք զգալի քանակությամբ էներգիա են օգտագործում, ինչպես օրինակ ջեռուցման և լուսավորության համար: Էներգիայի խնայողության ծրագրերը և հանրային շենքերում գործողությունները ներկայացնելը մի հատված է, որտեղ զգալի խնայողությունների կարելի է հասնել:

Տեղական ինքնակառավարման մարմինները և տարածաշրջանային կառավարությունները ևս տրամադրում են էներգիայի ինտենսիվ օգտագործման ծառայություններ, ինչպիսիք են հանրային տրանսպորտը և փողոցների լուսավորությունը, որտեղ կարող են բարելավվումներ իրականացվել: Եվ նույնիսկ այն դեպքում, երբ իշխանությունն այս ծառայությունների համար պայմանագիր է կնքել այլ մակատակարարողների հետ, էներգիայի օգտագործման կրճատման միջոցները կարող են իրականացվել մատակարարման և ծառայությունների պայմանագրերի միջոցով:

- ծրագրավորող, զարգացնող և կարգավորող

Հողի օգտագործման պլանավորումը և տրանսպորտային համակարգի կազմակերպումը շատ տեղական ինքնակառավարման մարմինների և տարածաշրջանային կառավարությունների պարտականությունն է: Քաղաքային զարգացմանը վերաբերվող ռազմավարական որոշումները, ինչպիսին է քաղաքային անկազմակերպվածությունից խուսափելը, կարող են կրճատել տրանսպորտի կողմից էներգիայի օգտագործումը:

Տեղական ինքնակառավարման մարմինները և տարածաշրջանային կառավարությունները հաճախ կարող են կարգավորող դեր ունենալ, օրինակ՝ էներգիայի կատարողականության ստանդարտներ սահմանելով կամ նոր շենքերում վերականգնվող էներգիայի սարքավորումների ներառում պահանջելով:

- խորհրդատու, մոտիվացնող և օրինակելի մոդել

Տեղական ինքնակառավարման մարմինները և տարածաշրջանային կառավարությունները կարող են օգնել տեղեկացնելու և մոտիվացնելու քաղաքացիներին, քիզեն ոլորտի ներկայացուցիչներին և այլ տեղական շահագրգիռ կողմերին այն մասին, թե նրանք ինչպես կարող են ավելի արդյունավետ կերպով օգտագործել էներգիան: Իրազեկության բարձրացմանը միտված գործողությունները կարևոր են ողջ համայնքը ներգրավելու՝ կայուն էներգիայի քաղաքականություններին աջակցելու համար: Երեխաները կարևոր լսարան են էներգիայի խնայողության և վերականգնող ծրագրերի համար. նրանք կկիրառեն իրենց գիտելիքները նաև դպրոցից դուրս: Հավասարապես կարևոր է այն, որ իշխանությունը պետք է առաջնորդի սեփական օրինակով և կայուն էներգիայի գործողություններում օրինակելի դեր ստանձնելով:

- արտադրող և մատակարար

Տեղական ինքնակառավարման մարմինները և տարածաշրջանային կառավարությունները կարող են օժանդակել էներգիայի տեղական արտադրությանը և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործմանը: Համակցված ջեռուցման և էներգիայի (CHP) շրջանային ջեռուցման համակարգերը, որոնք կենսաբանական նյութեր են օգտագործում, լավ օրինակ են: Տեղական ինքնակառավարման մարմինները և տարածաշրջանային կառավարությունները նույնպես կարող են քաղաքացիներին խրախուսել իրականացնել վերականգնվող էներգիայի ծրագրեր՝ ֆինանսական աջակցություն տրամադրելով տեղական նախաձեռնությունների համար:

2. Գերազանցության հենանիշներ (BoE)

«Գերազանցության հենանիշները» սահմանվում են որպես այն նախաձեռնությունները և ծրագրերը, որոնք ներկայացնում են քաղաքային միջավայրում կայուն էներգիայի զարգացման հայեցակարգերի համաշխարհային մոդելի հաջող կիրառությունը: Գերազանցության հենանիշների ներկայացուցիչները Դաշնագրի միջոցով հաստատում են իրենց պատրաստակամությունը՝ իրենց փորձը կիսելու և օգնելու քաղաքներին նմանատիպ մոտեցումներ իրականացնել, երբ կիրառելի և հարմար է, և պարտավորվել աջակցելու հմտության փոխանցմանը՝ տեղեկատվության տեղաբաշխման միջոցով, ներառյալ ուղեցույցներով, Դաշնագրի ստորագրող կողմերի միջոցառումներին մասնակցելով և, ընդհանուր առմամբ, Դաշնագրի շրջանակներում ամենօրյա համագործակցությամբ:

3. Աջակցող կառուցվածքներ

Քաղաքապետերի Դաշնագիրը բաց է եվրոպայի ամեն չափի քաղաքի դիմաց: Այն մեծ և փոքր քաղաքները, որոնք իրենց չափերի պատճառով միջոցներ չունեն գույքացուցակ պատրաստելու, կամ աշխատելու և գործողությունների ծրագիր նախագծելու, պետք է աջակցություն ստանան նմանատիպ հնարավորություններ ունեցող կառույցներից: Այս աջակցող կառուցվածքները կարող են լինել տարածաշրջաններ, վարչաշրջաններ, մարզեր, ագլոմերացիաներ, NUTS III շրջաններ կամ խորհրդատու քաղաքներ: Յուրաքանչյուր աջակցող կառուցվածք ակնհայտ կերպով կձևափոխվի Հանձնաժողովի կողմից որպես Դաշնագրի հիմնական գործող կառուցվածք: Դաշնագրում ներգրավվածության աստիճանը, ինչպես նաև նման ներգրավման որոշակի պայմանները, ներառյալ որոշում կայացնելու իրավունքները, մանրամասն կնքակայացվեն հատուկ գրավոր համաձայնագրում: